

ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ  
Մ. ԿԱՆՇՈՅԱՆԻ «ՁՈՐԻ ՄԻՐՈՆ» ՎԻՊԱԿՈՒՄ

7

ԱԳՆԵՍԱ ՂԱՓԼԱՆՅԱՆ

1960-ական թվականների կեսերին գրական ասպարեզ մտավ Մուշեղ Գալշոյանը և իր ինքնատիպ ու յուրահատուկ ոճով ստեղծեց գեղարվեստական խոսքի ուրույն աշխարհ՝ հոգեբանական, տիպիկ ու մոնումենտալ մի շարք կերպարներով: Այդ առումով առանձնանում է «Ձորի Միրոն» համանուն վիպակում Միրոյի կերպարը: Վիպակի հենքը անցայի վերհուշն է, պատումը՝ անցյալն ու ներկան ներշնչաբաժնով իրար:

Առաջին ընտանիքն ու որդուն կորցրած և երկրորդ որդուն կռիվ ուղարկող մարդը՝ Միրոն, որը երիտասարդությունն ու կյանքի երջանիկ օրերը անց էր կացրել «էրգրում», չէր կարող իր խորհրդածություն-վերհուշը շունենալ ու այն չվերարտադրել իր մայրենի բարբառով: Եվ որպեսզի դրանք վերստին երևան գան բնականորեն, կերպարները լինեն տիպական, ժամանակին ու միջավայրին հարազատ, Գալշոյանը իր հերոսներին խոսեցնում է իրենց հոգեհարազատ՝ Մշո և Սասնո բարբառներով: Հեղինակը, թափանցելով բարբառի ոգու մեջ, հայելու նման պարզ զգացել, տեսել ու բռնել է ժողովրդական բառ ու բանի համն ու բույրը: Ինչպես ժամանակին նկատվել է, «Ձուսպ է հեղինակի ոճը, խիստ, առնական, ինչպես ժայռ, այդպիսին է ժայռոտ այն աշխարհը, որի դավակն է Ձորի Միրոն: Այդ ոճը հասել է այնպիսի սեղմության և առանձնահատուկ եղանակի, որ ասես հյուսված է էպոսի լեզվով»<sup>1</sup>:

Հարազատ մնալով ժողովրդական լեզվամտածողությանը, Գալշոյանը հետո է կեղծ ու շինծու բառերից ու արտահայտություններից. նա տեղին է օգտագործում բարբառը՝ խոսքը դարձնելով հետաքրքիր, դիպուկ ու արտահայտիչ: Ինչպես Հ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Ա. Բակունցի, այնպես էլ Գալշոյանի լեզուն մոտ է կենդանի խոսակցական լեզվին: Հոգևածում ուսումնասիրվում է Մ. Գալշոյանի «Ձորի Միրոն» վիպակում առավել աչքի ընկնող բարբառային բառերը, որոնք քննվում են հետևյալ խմբավորմամբ.

1. ընդհանուր բարբառային (ծագումով հայկական) բառեր.
2. բարբառներում տեղ գտած փոխառյալ բառեր (հիմնականում Սասնո և Մշո բարբառներում):

Ընդհանուր բարբառային բառերը գործածության երկու ձև ունեն.

Ա. հերոսների խոսքում գործածված բարբառային բառեր, որոնք հեղինակը օգտագործում է հատուկ նպատակով՝ հերոսների կերպավորման, անհատականացման, նրանց ասելիքը ճիշտ վերարտադրելու ու համոզիչ դարձնելու համար:

Բ. Հեղինակային խոսքում օգտագործված բարբառային բառեր (որոնց քննությանը կանդաղառնանք առանձին):

Ընդհանուր բարբառային բառերն էլ կարելի է բաժանել խմբերի.

ա) ընդհանուր (հայկական), բայց որոշակի հնչյունական կամ բարբառային-բառակազմական օրենքներով ու հատկանիշներով տարբերվող բառեր. ինչպես, օրինակ՝ ախպեռ, մաբե, ճաբսնուկ, գառնուկ, երկտկեյ, դաբդակ. գեղ, գլառովել, էրեվաց, էրես, էվելի, էղնի, էրթանգ, մինակ, նամկներ, շատցավ, չորեալ, տփեց, օշխառ, օդոմի և այլն:

<sup>1</sup> «Սովետական Հայաստան», 30. VIII, 1968:

բ) Բառեր, որոնք բարբառային երանգ են ձեռք բերում տվյալ բարբառի քերականական համապատասխան փոփոխությունների շնորհիվ (հոլովում, խոնարհում, հոգնակիի կազմություն)։ օրինակ՝ գարկե, խմե, կրեռիմ, կրաշխիմ, կալեի, մեկեմ, հասցուց, հավի, կֆոֆոցու, բացվալ և այլն։

գ) Հնդհանուր բառեր, որոնք միշին հայերենում և ձեռագիր աղբյուրներում եղել են, բայց մնացել ու պահպանվել են միայն բարբառներում։ Դրանք նորովի կենդանություն են ստանում և մտնում են գեղարվեստական խոսքի բառապաշարի մեջ։ ինչպես հալավ, արբշում, անթի, խոռոտ, խեւալ, շլինգ, գեշ և այլն։

դ) Գրաբարյան կամ հին հայերեն մի շարք բառեր, որոնք գրական հայերենում քիչ են գործածվում կամ գրեթե չեն գործածվում, բայց վիպական հանդես են գալիս կարծես հարադատ միջավայրում, միանգամայն պատճառաբանված, դիպուկ և ունեն իմաստային այնպիսի ծանրաբեռնվածություն ու կոնկրետություն, որն առավել մեծացնում է դրանց գործածության անհրաժեշտությունը։ Այդպիսի բառերը, սովորաբար, թե՛ ձևով, թե՛ հնչմամբ գրաբարյան են՝ իրենց նախնական տեսքով (դրսևորմամբ)։ օրինակ՝ աշաց, ոտաց, կամոֆ, մոտֆ, հեռու, քանց, քակվեց և այլն։

Սասնու և Մուշ գավառները շփման եզրեր ունենալով հարևան ժողովուրդների հետ, նրանց կենցաղից վերցրել են շատ բառեր ու արտահայտություններ, որոնք վարպետորեն օգտագործել է Մ. Գալշոյանը։ Արևելյան լեզուներից փոխառված բառերի ու արտահայտությունների նրա ճաշակ ու տեղին կիրառումը վկայում է հեղինակի շափի զգացման ու տաղանդի մասին։ Փոխառյալ բառերը կարելի է խմբավորել հետևյալ կերպ։

ա) Թուրքերեն լեզվից փոխառյալ բառեր։ բաղազ, խանչալ, դանթա, փափախ, քալթառ, քաշե, քափալ, քանմ, քեթառ, գուլաշի և այլն։

բ) Արաբերեն լեզվից փոխառյալ բառեր։ հառամ, ժղուլ, դալաթ (ություն), ժղուլ, ժղաուն, ֆուխառա և այլն։

գ) Պարսկերեն լեզվից փոխառյալ բառեր։ քազա, փեշեշ, օռոպի և այլն։

դ) Քրդերեն լեզվից փոխառյալ բառեր, որոնք համեմատաբար քիչ են։ լառ, զղառա և այլն։

Թեմատիկ առումով բերված բառերը դրսևորում են ոճական բազմազան նրբերանգներ, որոնք աչքի են ընկնում թե՛ իմաստային և թե՛ կիրառական տարատեսակ յուրահատկություններով։

Քննենք այդպիսի մի քանի խմբեր։

1. Բառեր, որոնք գործածվում են մարդկանց դիմելու, բնութագրելու համար։

Ինչպես հարսնուկ, այնպես էլ գառնուկ բառերը բնիկ հայկական են և Սասնո ու Մշո բարբառներում ունեն իրենց փաղաքշական, փառացուցիչ իմաստը։ «Հարսնուկ, հաց բեր,— ձայն էր տալիս, և խանդով զայն ու թանով լի կուլան ձեռքին կանգնում էր ծիրանենու տակ, սպասում մեծ կեսրարի մոտենալուն»։

Երբեմն ընդհանուր հայերեն բառը վիպական գործածվում է բարբառային իմաստային երանգով և ստանում է ոճական արժեք։ Այսպես՝ հաճախակի կրկնված գառ բառն ունի ահմեղ, հեգ, խելոֆ, հեռագանդ իմաստը, իսկ գրական հայերենում այն ունի աշխատի ձագ իմաստը։ Գառ կոչական բառով Գալշոյանի տարեց հերոսները դիմում են պատանիներին, աղջիկներին, երիտասարդներին, բայց ոչ հասակակիցը՝ հասակակցին։ Գառ բառի գործածումը տարբեր նախադասությունների մեջ ունի տարբեր հնչեղություն ու տարբեր իմաստային երանգ։ Ասածը հաստատենք օրինակներով։ «Էս է մեր օջախ, գառ» (էջ 9), Հարուկ որդուն այլ կերպ չէր կարող դիմել Միտոն, որը մառվի նրա հետ վերադարձել էր հայրենի տուն։ Գառ բառում արտահայտվում է հերոսի հո-

2 Մ. Մանուկյան (Գալշոյան), Կոտնկ, Երևան, 1969, էջ 11։ Այսուհետև էջերը նշվելու են մեջբերումներին կից։

գում եղած հանգստությունը, սակայն հոր՝ Միրոյի երկարաշունչ օֆ-ի վրա Հարույթի հարցմանը,— «Գլուխդ է ցավում, հայրի՛կ...»

2-ի, գառ... իմ սիրտ կցավա...» (էջ 9) պատասխանից զգացվում է հոր հոգեվիճակի սթափությունն ու կտրուկ վերաբերմունքը։ Կամ՝ ձևարսնուկ, գառ, արտ հաց տարա՞ր (էջ 11) հարցման մեջ նկատելի է սկեսրայրի սերը, հարգանքն ու ջերմությունը դեպի հարսը։ Իսկ՝ «Զմռան համա՞ր քու սիրտ կենդվի, գառ, համբերե, գարուն կբացվի» (էջ 19) օրինակում Բորե եղանը դիմող Հարույթ պապի խոսք-դիմումի մեջ զգացվում է նրա համակրանքը, խղճահարուստունն ու գորովագրությունը դեպի աշխատանքի ընկերը։ Բուրբուլին այլ իմաստ ու հնչեղություն ունի՝ «Աշխարհի բնույթ ուրիշ է, գառ, ուրիշ է ու էդ-պեսով էլ աշխարհք աշխարհ է» (էջ 24) կամ՝ «Հարույթ... Աշխարհ հող ու ջրից անուշ բան չկա։ Մարդու ուժ հողի մեջ է։ Քանի հող չեն խլե ոտաց տակեն, մարդ անպարտ է, թեկուզ զարկվի՝ անպարտ է, խլեցին՝ գերի է, գառ» (էջ 23)։ Այս խորհրդածություն-բացատրության մեջ կա կյանքի փիլիսոփայական խոր իմաստություն, որտեղ գառ կոչականը ավելի շեղոք վիճակում է, քան մյուս նախադասություններում։

Գալշոյանական լեզվին յուրահատուկ բնապատկերի ներդաշնակությունը լրացնում ու հանգավորում է մաքն բառը, որտեղ երկրորդ ձայնավորի հավելումն ավելի երաժշտականություն է հաղորդել բառին։ Մայր բառը, որը հրեդավորական ծագում ունի, հետաքրքիր ձևափոխությամբ է կիրառված Գալշոյանի ստեղծագործություններում։ Վիպակում այն հանդես է գալիս մեծ մասամբ մաքն ձևով։ Օրինակ՝ «Հնկուզասարի խշշոցն էր առնում ականջը, խուճար մաքնի դնդնոցը ու հիշում, որ իր մաքեն էլ այդ խաղը, հենց այդ խաղն էր ասում ու՛ ալդպես անուշ, անուշ։ Հետո պապը իրար էր խառնում անձրևի խշշոցն ու խումար մաքնի դնդնոցը, մոռանում էր, որ անձրև էր գալիս և ականջներում մնում էր միայն էն, իր մաքնի երգը» (էջ 12)։

Ժողովրդի կենդանի լեզվի վառ դրսևորման և դիմելու լավագույն օրինակներից են՝ «Աստծու բարին, ախպեք» (էջ 9) դարձվածքը, ուր ախպեք բառական հայեցողության բարբառային ձևն է, կամ՝ «Քոչեք, առանց աստծու էսօր քելք շանիք» (էջ 42) օրինակում հերոսը դիմում է ընտանիքի անդամներին։ Քոչեք բառը մի շարք բարբառներում ունի ոչխարի զոմ իմաստը, իսկ Սասնո բարբառում այն հանդես է գալիս ընտանիք իմաստով։

Հայերեն ժողովրդախոսակցական լեզվում բուրբուլի քաջածանոթ է գուլաշ-շի=բմբջ բառը։ Սակայն գուլաշական հարսանիքի կոլորիտը գեղեցիկ պատկերելու համար հեղինակը առանց երկմտելու, բառին շատ հարմար միջավայրում, օգտագործել է այն։ Օրինակ՝ «Թաղը թաղեցի «գուլաշիներ» թիկունքին էր ու առանձին-առանձին՝ ընտրած «գուլաշը» (էջ 37), կամ հարսանիքի նույն տեսարանում որքանով ճիշտ կլիներ, եթե ազաբբաշի բառին փոխարինեին փեսայի թիկնապա՛ն կամ խաչեղբայր բառերը։ «Ազաբբաշին ներսեսն էր, տնկեց ուռն ու կանգնեց մոտը» (էջ 36)։

Սասունցի և քուրդ ժողովուրդները ապրելով կողք-կողքի միմյանց լեզուներից փոխառել են բառեր։ Մինչև այժմ էլ սասունցին լիիրավ օգտագործում է լառ բրդերեն բառը, որի կողքով անտարբեր չէր կարող անցնել Գալշոյանը։ Ինչպես՝ «—լառ, քու մեղքն ի՞նչ է, ուրախ էղի, որ շներ վրա կերթան մարդ ու գազանի» (էջ 15) կամ՝ «Աստված քու հետ, քու օշխար ու շան, լառ» (էջ 16)։

2. Բառեր, որոնք գործածվում են բնության երևույթների անվանման, բնութագրման, տիպականացման ու պատկերավորման նպատակով։

Լինելով սասունցու հետնորդ, Գալշոյանը աշխատել է Սասնո և Մշո բարբառներից վերցնել յուրահատուկն ու բնորոշը, ենթարկել գրական մշակման, ապա գործածել գեղարվեստական գրականության մեջ։ Որքան պատկերավոր է տրված իրիկնապա՛հը լեռների վրա. «Իրիկնապա՛հ է։ Լեռների վրա կարմիր ճալավ հագած ամպերի պարը կար» (էջ 34)։ Սա բնապատկերի մի հույակապ նմուշ է, պատկեր, որը յուրահատուկ է գալշոյանական բնապատկերի նկարագրման նրբին զգացողությանն ու ճաշակին։ Փորձենք պատկերը ներկայացնել

նալավը փոխարինելով գրական զգեստ բառով. «Լեռների վրա կարմիր զգեստ հագած ամպերի պարը կար»։ Հալավ բառով պատկերը ձեռք է բերել բնականություն, գեղեցկություն, նկարագրի վեհություն. այդ բառով նախադասությունը համալրվել է համահնչուն բառերով։

Բնապատկերի վերակերտման հեղինակի հմտությունն է երևում հետևյալ օրինակներից, որոնցում ընդգծված բառերով բարձրանում է գեղարվեստական խոսքի արժեքը. «Հետո ձորերում փշրվող հրանոթի որոտի ու Սեպասարի պատասխան-ուրուամունքի հետ հեռու, հեռվից մի հույս եկավ՝ ասկյարները եղածը կհամարեն բավարար...» (էջ 73), կամ՝ «Աշնանը Ընկուղասարից գլուխը ցած էր ընկուղաները, լցվում քարերի գոգը, ղխղխկալով կանգնում գլուխի պատերի տակ...» (էջ 18)։

Գեղագետին վայել հմտությամբ է գործածվել խորոտ կամ խորոտիկ բառը։ Դարձյալ Միրոն «էրգրում» է. հուզիչ, առատ ու կյանքով լի աշնանը լրացնում է հարսանիքի գեղեցիկ օրը, որը հեղինակը խորոտ կամ խորոտիկ օր է անվանում. «Անուշ աշուն էր... Ու հարսանիքի օրն էր խորոտ» (էջ 34), «է՛, անուշ, անուշ աշուն էր... խորոտի՛կ օր ու իրիկուն էր» (էջ 38)։

Սպասվող արհավիրքը, որը կանխագուշակում էր ժողովուրդը (Հարութ պապի երազը), հեղինակը հմուտ բնագետի տրամաբանությամբ հաստատում է սարերի գլխին հավաքված սև ամպերով, որ զգվառաց է համարում. «Մարաթուկի գլխին սև ամպ կար, Մովսեսարին՝ կար, տան թիկունքի Ընկուղասարին՝ կար... Ամպերի զգվառաց էր» (էջ 42)։

Հայդուկ հերոսների անսահման սերը դեպի հայրենի սարերն ու ձորերը առավել ցայտուն է դրսևորվում թշնամուն մի թիզ հող չդիջելու նրանց սրբազան երգումի մեջ. «Թե մենք էս ձորերու տերն ենք, երդում էս ձորերու ահ ու ջրերուն, երդում մեր էրգրի ծովս ու դումանոտ ձորերուն» (էջ 62)։ Գալշոյանը դումանոտ բառի փոխարեն կարող էր գործածել մշուջոտ բառը, բայց առաջինն առավել ժողովրդական է ու տպավորիչ։

Սասունը հայտնի էր իր բթաշունչ ձմեռներով, երբ սարերի ու ձորերի ձյունի հոսքը (հուսիճ) ահասարսուռ ձայներ է հանել, որոնք հեղինակը դղիրդ-դմբառաց է անվանել. «Եվ բեկորներ էին պոկվում ծերպերից, դղիրդ-դմբբռտնոցով իջնում, չլսվում էին հեղեղի մեջ» (էջ 22)։

Դեռ զավ նշանակում է ինչ որ բանից ձայն հանել, իսկ վիպակում ունի ինչ որ իրադարձությունից արձագանքելով իրարանցման մեջ լինելու իմաստը. «Մյուս առավոտ ինքն էլ ելավ կիրճից, գնաց նոր լուրից դեմքացուլ աշխարհը» (էջ 104)։

Վիպակում սուրվեստագետի մեծ ուժով ու տառապանքով է նկարագրված կոտորածից հետո մարդու մեջ ջարդված, անհույս վիճակը, որը համեմատվում է սիրտը ելած ու դատարկ երկնքի հետ։ Անօրինակ ու չսված գազանությունները լրացվում են երկնքի անտարբեր, անհոգի դատարկությամբ։ Դաբդակ խորիմաստ բառը ամբողջացնում է երկրում ու երկնքում եղած արհավիրքի ուժը. «Կոտորուքսից երկնքի սիրտ ելած էր... Չէ, երկինք դաբդակ է... Գոռուն-գոռուն ընկավ երկինք, կարկուտ եկավ, ծառերից գոգ-գոգ ծաղիկ թափվավ, ծառեր ճյուղակոտոր եղան...» (էջ 52)։ Դաբդակ բառում կատարված է առնչմանում և դրափոխություն. բառասկզբի դ-ն աղգել է ա-ի վրա, իսկ ր-ն փոխել է իր տեղը։

3. Բառեր, որոնց միջոցով առավել բնորոշ ու տիպական են դառնում նրկարագրվող երևույթներն ու գործողությունները, եղելությունները,

Սասուն և Մշո բարբառները ունեն խոսքի սեղմություն և երաժշտականություն. «Միրո, գարուն բացվավ, չորս-հինգ օխար կտանիս Մշո դաշտ գել-խեզդ կբերիս» (էջ 21) նախադասության մեջ սղված երբ շաղկապով և շուն գոյականով ձեռք է բերվել մտքի սեղմություն, իսկ բացվավ, կտանիս, կբերիս բայերը խոսքին հաղորդել են բարեհնչունություն։

Հեղինակը, հարազատ մնալով գլուղական կյանքի պատկեր-նկարագրմանը, իր հերոսների անմիջական աչքերով, նուրբ ու զգացմունքալից է վերարտադրում այն, Հոգեկիճակ-իրողության ամբողջականացում-հաստատումն

է հոր տան հետ քունդվող, խաթարվող-ավերվող կյանքն ու հարսնությունը. «Լառ, ասում է իշխնձորցի Կամեն,— քու հոր ավեր տան հետ ավրավ քու հարսնություն» (էջ 78)։ Կամ՝ որքան պատկերավոր ու պրեթե շոշափելի է դառնում թուրք խուժանի կողոպուտի գործողությունը խթխոց (հրմշտոց) բարրառային բառի առկայությամբ. «Մութ էր, և ասկյարների խթխոցը հեքիաթում լսած շարքերի պարի նման էր՝ զզվելի էր ու զզվանքից նոր կատաղություն էր ծնվում» (էջ 68)։

Հավատարիմ բարբառի նկատմամբ ունեցած նախասիրություններին՝ Գալշոյան հերոսի հուղաշխարհը արտահայտելու համար գործածել է խընդ-մընդալ (քմծիճաղել) բառը, որն ընդգծում է պահի իրողության հոգեբանությունը. «Զորի Միրոն դո՛ւ կխնդմընդալ՝ շունչ ու շնչավոր քու նման անտեր մնալուն...» (էջ 121)։

Խենալ-ը հեղինակի շատ սիրած բառերից է, որը բաղմիցս օգտագործվում է նաև նրա հետագա ստեղծագործություններում։ Այս բառը սասունցիների դատողությամբ համարժեք է՝ ծռելուն, ցնորվելուն, խենթանալուն. «...Ուրքակոխվ է, լառ, հանաք է, մի խենա, օրմ էլ դու ներսեսին կզարկիս գետին» (էջ 38)։

Վիպակի վերջում, Սառնյի հայտնվելուց հետո, ծերունի Միրոյի կյանքում անսպասելի շրջադարձ է կատարվում։ Ծերունին իրեն այդ զգալիս կորցնում է հավասարակշռությունը, աչքերը մթնում են խելակորույս ցանկությունից։ Չէ որ նա կարող էր աշխարհից հեռանալ գերդաստանի արյունը շժառանգած. «...և արյունը խուժեց, զարկեց քունք ու ճակատին, մթնդեցին աչքերը, շունչը բերանում հեհնե դարձավ, տաք դող ընկավ սիրտ ու ծուծի մեջ, և զդաց, որ... այր է» (էջ 124)։

Շուշերի ծայրը լթողնող ու հուշերի մեջ տարուբերվող Միրոն սթափվում և դառնում է իրական կյանքը. իր «տաք թոնիրը», իր կյանքի թելը, իր հույսն ու ապավեն Հարութ որդին գնում է պատերազմ. «Հարութ... էս ամպշող երկնքի տակ ինչքան քու աչք կկտրե, ինչքան քու աչք կկտրե, քեզնե գատ, քեզնե գատ, գատ, բան չունիմ։ Զավերիս իմ տուն, չգոցիս իմ դուռ։ Էս ճամփեն երկաթիս, դառնաս...» (էջ 102)։ Հոր ցանկությունը մեկն է ու միակը՝ որդու վերադարձը։ Նրկտկել սեղմ ու արտահայտիչ ժողովրդախոսակցական բառով հարուստ ու արտահայտիչ է դառնում նշված միտքը։

Սաճելով ինչ ու բան վայր ընկնելը և մտքից հանելը ժողովրդախոսակցական լեզվում արտահայտվում է պլստալ և մտանան անել բառերով. այս բառերի գործածությունն առավել արտահայտիչ ու պատկերավոր է դարձնում միտքը. «Հետո, վիճակին գերի, մտնան էր անում, որ շորը ճղճղված է, ու գրլ-խաշորի ճոթերը պլստում էին, բացում կուրծք ու ծոց» (էջ 79)։

Հարազատ մնալով իր սկզբունքին, հեղինակը հաճախ նախընտրում է խոսակցական ոճը. «Ու մի գիշեր մնում էր Մարաթուկի փեշին, լույս առավոտի հետ, օրհնանքը թողած, ձի նստում, իջվառում գյուղ» (էջ 18)։ Իջվառում-ի փոխարեն կարելի էր գրել իջնում էր, բայց իջվառում-ը ժողովրդական մտածողությանը հարազատ բառ է և շատ ավելի արտահայտիչ է դարձնում պատկերը։

Վիպակում խիստ տպավորիչ է Միրոյի՝ բոլորի կողմից աննկատ սիրո նկարագրությունը, որը մի ինքնատիպ պատկերման միջոց է։ Գողտրիկ ու անտեսանելի սերը գեղարվեստորեն է վերարտադրել Գալշոյանը, օգտագործելով մաղմղել բառը. «Մնաց, սերը մաղմղեց, մաղմղեց, քուն ու արթուն մաղմղեց, երկնքից իջավ ու լցվեց հոգին ու ելավ աչքերից թափվեց, և անտես լմնաց խանդութից» (էջ 33)։

Հեղինակի բարբառում հետաքրքիր կիրառություն ունի դադրել բառը, որի մեջ կատարվել է բառիմաստի փոփոխություն։ Դադարել (դադար տալ) բառը, ինչպես այլ բարբառներում, այնպես էլ Մշո և Սասնո բարբառներում նոր իմաստ է ձեռք բերել՝ ճոզնել (դադրել)։ Ճոզնել իմաստով այս բառը հանդիպում ենք նաև Ավ. Իսահակյանի «Մաճկալ» հայտնի բանաստեղծության մեջ։

Վիպակում կան փոխաբերական իմաստ՝ արտահայտող բառեր, որոնք ճիշտ ներկայացնելով իրողությունը, շոշափելի են դարձնում արտահայտվող միտքը: Այսպես, օրինակ՝ «Փեշերից ծվեններ էին մնացել փշերի վրա, հա՛, հա՛ ծունկբաց պիտի մնար ու դրա համար ամաշում էր, ցուրտ ու բամուց, տոթ ու թուխց շորը փստրել էր՝ ամաշում էր...» (էջ 78), Փստրել նշանակում է կարի կտրելը, մանր-մանր մասերի վերածելը, սակայն այն բոլորովին այլ իմաստ է ստացել Գալշոյանի վիպակում: Փստրել-ը խոթեցի շխտական հարսի ոչ միայն շորերի զգզվել, ծվեն-ծվեն լինելն է, այլև նրա հավատի փշովելը, որը հեղինակը նմանեցրել է փշերի վրա մնացած ծվենների:

4. Բառեր, որոնք ծառայում են կերպարների հոգեբանության, նրանց ներաշխարհի հույզերի արտահայտմանը, գեղարվեստական դիպուկ միջոցներով դրանց բնութագրմանն ու նկարագրմանը:

Ժողովրդի կենդանի լեզվի հոգեբանությանն ու պատկերի հարազատությունն է զգացվում հետևյալ արտահայտություններից. «Կլոր մեկ սարի որոնեց, խույս տվեց թուր ու թվանքից, Երեբալով տարավ իր անոթի ու մերկ մարմինը՝ որոնեց» (էջ 87), «Մնչո, ինձ թուլեցի մի իմանա... գերդաստան թաղելու կերթենք...» (էջ 61), «Գնաց... Բնավեր մարդկանց խմբերի հանդիպեց, հարց ու փորձ արեց» (էջ 87): Առաջին նախադասության մեջ անոթի բառը կարող էր փոխարինվել ստված, քաղցած բառերով, բայց այդ դեպքում խոսքը ժողովրդի սրտակից չէր լինի: Այս բառը իր գործածությունը պահպանել է միայն բարբառներում: Իսկ երկրորդում՝ թուլհոգի, դրական հայերենում նշանակում է անկամք, կամք չունեցող, բնավեր—տունը փախված, անտուն, որոնք ղուտ ժողովրդախոսակցական են:

Վիպակում գեղարվեստական խոսքը երբեմն համեմվում է այնպիսի բաներով, որոնք արտահայտում են հերոսի մեջ եղած, խտացված խիստ մեծ ցանկություն, հույզի ու նպատակամղվածության ցանկալի հաղթանակ. օրինակ՝ «Պողե, ճարամ ուտես, Պողե...» (էջ 37):

Հերոսների հուզաշխարհում եղած վերաբերմունքը, սերն ու զգացմունքն արտահայտվում է հեյրան փաղաքշական բառով. «—Հըյ հեյրան, Սամիկ, հեյրան...» (էջ 37), «—Հո հեյրան, հո,— Արոն խոռված ասաց եզներին...» (էջ 47):

Սասնո և Մշո բարբառներում վատ բառի, շատ վատ, սարսափելի վատ բառակապակցությունների փոխարեն հերոսի՝ Հարութ պապի բերանով օգտագործվում է գեշ բառը, որն ընդգծում է հուշում է իրավիճակ-երազի սարսափելի վատ կանխազգացումը. «—Խումար, հարս, գեշ շատ գեշ երազ տեսա...» (էջ 42):

Ժողովրդական փոխաբերական արտահայտություն է ել, տուր ֆու հոգուն բառակապակցությունը, որն առանձնակի հարստացնում է տվյալ միտքը: Այսպես՝ գաղթվելուց հետո սասունցիք հաստատվում են մի շենում և ամեն մեկը նոր տան հիմք է փորում, իսկ տավրիկցի ծերունի Զաքարը ձեռնպահ է, նա ոչինչ-ոչինչ չունի աշխարհում: Գյուղի նահապետ Նհոն նրան մղում է նորից կառուցելու ու ապրելու, որն արտահայտվել է հետևյալ իմաստալից արտահայտությամբ. «Ել, տուր ֆու հոգուն՝ հիմք փորե» (էջ 101), այսինքն՝ խոռվ հոգուդ ստիպիր և դու էլ տուն կառուցիր:

Հոգեմիջակի նկարագրմանը ծառայում են ոչ միայն իսկապես հուղմունք, ուրախություն, ատելություն և հոգեկան այլ երևույթներ նշանակող բառեր, այլև բոլորովին այլ նշանակություն ունեցող բառեր, որոնք հանդես են գալիս համապատասխան խոսքաշարում, միանգամայն դիպուկ, արտահայտիչ բնորոշում տվյալ անհատի պահի հոգեբանությունը: Ափսիք մառացի նշանակում է մթաթյան մեջ խաբխափելով, շոշափելով փնտրել ինչ-որ բան: Վիպակում այս իմաստից բացի, ունի հերոսի շփոթվելն ու զայրանալը, սպասումը ցանկալի իրը գտնելու համար իմաստը. «...փնտրեց չգտավ, ափսիք՝ չգտավ ու...» (էջ 47):

Բարբառային բառերի հարմար ու տեղին օգտագործումը հերոսի խոսքին հաղորդում է նոր երանգ և նրան բնորոշ նկարագիր: Օրինակ՝ հոգեբանության սրում ևնք նկատում հետեյալ դատողության մեջ. «...Թող խեղճանա ֆիդային, թող խնդրի, ծնկած ու ծուռըլինք պաղատանք անի. լմնա սարի ֆիդայի» (էջ 25):

5. Բառեր, որոնք վայրի կամ տեղի, առարկաների, իրերի, դեպքերի, գործողությունների անվանումներ են:

Վիպակը ծնված է կարոտի մեծ զգացումից՝ կարոտ հայրենի հողի ու բնաշխարհի նկատմամբ, որը Գալշոյանը խտացրել է էրգիք մի հատիկ բառի մեջ, Երկիր՝ ընդհանրապես երկրագունդ, աշխարհ լայնածավալ հասկացություն ունի, իսկ վիպակում սրանցից բացի ձեռք է բերել կոնկրետ ու տեղային իմաստ իր բարբառային արտասանությամբ՝ էրգիք: Դա Սասուն աշխարհն է. «Ինքը երկու տարի մենակ մնաց էրգի սարերի, անտառների, ձորերի ու ջրերի հետ, երկու տարի վայրենացած շների պես, վայրենացած շների հետ զզվառվեց գայլերի հետ...» (էջ 95):

Ժողովրդական խոսքի արտասանական երանգ է ձեռք բերել էրիվան-Երեվան բառը. «Գնաց, առաջին պատահած գյուղից իմացավ «էրիվանի» ճամփեն, գնաց՝ մի շաբաթ բեռնակիր եղավ ու հիշեց Մխերին...» (էջ 104):

Գալշոյանը հարազատ մնալով բարբառախոս ժողովրդի լեզվամտածողությանը, օգտագործել է բազմաթիվ բառեր. «...Ի՞նչ կուզիս... Ո՞վ ես, — ձայնը ձորի բողբոջից եկավ» (էջ 117) նախադասության մեջ արհեստական կրճեհին բերանից, կոկորդից, շրթից բառերը:

Հավաքաբեղ, գրուցաբեղ բառերի փոխարեն հեղինակը գործածել է ժղլտուն բառը, որն ընդգծում է գյուղի ձմեռային պատկերը, ամբողջական դարձնում անցած ու անդարձ օրերի վերհուշը. «...Ժղլտնից դուրս էին գալիս, ու գերդաստանը իծաշարով քայլում էր ձյան մեջ տափած արահետով» (էջ 20):

Յուրաքանչյուր բարբառային բառի հեղինակի օգտագործումը շեշտում ու հարստացնում է բարբառախոս հերոսի հոգեբանությունն ու մտածելակերպը. «Ուտ կախ գցեց, դուբանին մոտիկ պտույտ տվեց, որ խութեցի հարսը նկատի իրեն, չնկատեց՝ ձեռքերը կրծքին խաշած էր, կոպկախ էր ու անյուր «Վաճառի տակի» աղմուկին» (էջ 105): Հանգիստ չտվող հուշերը տարաբերում են Միրոյին. մեկ հարսանիքի գեղեցիկ ու ցանկալի օրն է հիշում, մեկ՝ գարունը, ձմեռը՝ իր թլոր Դավթի հեքիաթ-պատմություններով, մեկ արյունոտ օրը, ու ասկյարների մոտենալն է հիշում. ուզում է կռվել, բայց մարագում պահած թուրը չկա, խարխափելով ման է գալիս ու չի գտնում: Վայրենացած, կյանքից ահ ու սարսափ շունեցող մարդը, որի մեջ նստած էր միայն փրկել-փրկվելու, ազատել-ազատվելու տենչը, չի գտնում իրեն այնքան հարկավոր խաչալը. «Ձորի Միրոյին պետք էր գոռալ, որոտալ, մռնալ, փնչալ ֆըշ-շալ... Ախր... Փնտրեց խաչալը, չգտավ, փնտրեց չգտավ...» (էջ 47): Սասնո ծխակատարություններով լի հարսանիքի նկարագրության մեջ հանդիպում ենք ուռք պարզ և ուռվակռիվ բարդ բառերին: Սա ուռ բառն է, որը ուռ-ուռք, ձեռ-ձեռք նմանությամբ ստացել է Բ-ը վերջավորությունը ուռ-ուռք: Սասնո բարբառում ուռք նշանակում է կենաց ծառ: Այն հյուսում են ուռի շիվերից, վրան ամրացնում չորացած մրգեր և բռնում նորապսակների գլխավերևում: Ուռքը սերունդ ունենալու խորհրդանշել է: Սասնում սովորություն է եղել երկու կողմի հարսանքավորների միջև, փեսայի տան կողմին, կատակ-մարտ լինի ուռքի համար. «Տղերքը ընդհատեցին պարը, ուռքն առած ելան տանիք» (էջ 38): Յուրովի զգալով ու պաշկերելով Սասուն աշխարհն իր բնությանը, նիստ ու կացով, թվում է, հեղինակը ներկա է եղել այդ գործողություններին ու վերապրելով պատկերել անցյալը:

Գալշոյանը ունի նաև ժողովրդական լեզվամտածողության դատողություն, որը և ընդհանուր եզրեր է գտնում բնության և նրա մասնիկը կազմող Հարուսթ

պապի միջև. ինչպես ամեն գարնան բնութիւնն է փոխվում (ծառը կեղևահանվում է), այնպես էլ Հարութ պապն է փոխվում. «Հետո, ամեն գարնան պես գարուն եկավ, ամեն գարնան պես պապը իր փափախն ու ելակը զցեց ամբարի հուրը, կանգնեց ծիրանենու տակ» (էջ. 42):

Վիպակում օգտագործված «քյավթառ շուն»-ը ժողովրդական խոսք-գայ-րույթ է: Զայրույթը մի հերոսի՝ խութեցի շխոսկան հարսի, որն անկարող էր զսպել խռոված հոգու փոթորիկը իր անտերունչ ու թափառ լինելուն, նոր աշխարհ եկած փոքրին կորցնելուն. «խութեցի հարսը արցունքը դրթացրեց, աշքերում մերկացավ զայրույթը՝ ուղղեց իշխնձորցի Կամեին. «Քյավթառ շուն» (էջ 31):

Միրոյի և Սառեի միջև կատարված արարքը չէր կարող ներել նահապետական գոյւղը, որը ոչ օրինապահ ծերունու երեսին շարտում է «եռփակ շուն, քյավթառ» (էջ 127) արտահայտությունը:

Քիչ գործածական է օտուպի անբարոյազան նշանակութամբ բառը: Սա պարսկերեն ռուսեպիդ—սպիտակեքես բառն է, որը կորցրել է իր նախնական իմաստը. տեղի է ունեցել բառիմաստի շրջում և ձեռք է բերել ոչ սպիտակեքես՝ անառակ իմաստը: Տասնյակ մեկնված ձեռքեր քաշում են խութեցի հարսի ծվծված փեշը. «...քու դալաթության պատճառով ամենիս սրի կմատնիս... սուսպի...» (էջ 81): խութեցի հարսի բնական կարիքի համար անուպսուտանփախստական գաղթական խմբից մի փոքր հեռանալը, որը կարող էր մատնել թաքստոց-տեղը, տարեց Կամեի ու շատերի համար անբարոյականության է հավասար:

Ձեռնփառություն բառը մի շարք բարբառներում ունի գողությանը զուգահեռ իմաստ: Սակայն Գալշոյանի օգտագործած ձեռնփառություն և գրական հայերենի գողություն բառերի միջև մեծ տարբերություն կա: Գողությունն ավելի լայն իմաստ ունի. գողը հափշտակում, սեփականացնում է ուրիշի ինչքը, որը օրվա գոյության և ապրելու (գոյատևելու) հետ քիչ կապ ունի, իսկ «ճոր հացի» համար ձեռնքառություն անելը, ավելի ճիշտ մարդուն բնության կողմից տրված ուտելու, գոյատևելու, ապրելու պահանջի հետ կապ ունի: Տնանկ, քարանձավի բնակիչ մարդու մեջ արթնացած վայրենությունը, ուտելիք ձարելահայթայթելու մեծ ցանկությունը նրան ինքնաբերաբար մղում է ձեռնփառության, բայց ոչ կողոպուտ—թալանի կամ խնդրել—մուրալու: Ահա նորից խորհրդածում է Միրոն. «Ճոթ հացի համար ձեռնփառություն եղավ, կոխվ, արյուն թափել եղավ: Ծղավ, բայց... բայց ձեռք պարզել—մուրալ՝ չէ: Զեղավ» (էջ 85):

Ղալաթ փոխառյալ բառը հեղինակի մոտ ձեռք է բերել հայերենի կազմության վերջավորություն՝ ստանալով ղալաթություն ձևը: Սա կենդանացնում է հերոսի խոսքը. «Ինչ ղալաթություն կանիս, հոս էրե,— Կամեն ոտքի կանգնեց...» (էջ 80):

6. Գորբարյան կամ հին հայերեն մի շարք բառեր, որոնք իրենց գործածությունը պահպանել են բարբառներում (Մշո և Սասնո), վիպակում հանդես են գալիս միանգամայն հարազատ միջավայրում: Այդ հաստատվում է հետևյալ օրինակներում. «Եմ կյանք քու աչաց մեջ առած կերթաս», — քու գնալուն դեմ էղնիմ թե կողմ՝ կերթաս, կամոֆ—անկամք՝ կերթաս. երկիր նեղ վիճակի մեջ է, դու՝ երկրի տղամարդ,— դադար տվեց» (էջ 63), «Ուտաց ճամփա էրթալ կուպիմ...» (էջ 60), «Նիկոլի վիդ կոտրվի, քանց կոտրվավ» (էջ 59), «...աստված է վկա՝ իմ մատաղացուն է, ճեռու գարնան գլուխ, կոտորումից ամիս առաջ ծնվավ...» (էջ 33):

Մուշեղ Գալշոյանը, վեր հանելով մայրենի բարբառը, նկարագրելով Սասնա նահապետական և հերոսական անցյալը, ընթերցողին կարողացել է հաղորդել ժողովրդական խոսքի սմբողջ ինքնատիպությունն ու խորությունը:

ИСПОЛЬЗОВАНИЕ ДИАЛЕКТИЗМОВ В ПОВЕСТИ  
М. ГАЛШОЯНА «ДЗОРИ МИРО»

АГНЕССА КАПЛЯН

## Резюме

Употребление диалектизмов в повести Мушега Галшояна «Дзори Миро» основано на собственно диалектизмах, имеющих армянское происхождение, и словах, заимствованных из других языков—турецкого, персидского, арабского, курдского. Тематически эти слова можно разбить на несколько групп как по значению, так и по особенностям употребления (например, при обращении к кому-либо, при характеристике людей или явлений природы и т. п.). Использование диалектизмов значительно обогатило язык повести, свидетельствуя о мастерстве писателя.